«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 7-րդ հոդվածը լրացնել նոր 8.1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«8.1 Սույն հոդվածի 8-րդ մասում նշված կադաստրային արժեքների տարբերությունը քսան միլիոն դրամը, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային համայնքների բնակավայրերում՝ տասը միլիոն դրամը գերազանցելու դեպքում, համայնքի ղեկավարին ուղղված՝ հողամասի սեփականատիրոջ դիմումի հիման վրա համայնքի ավագանին հողամասի սեփականատիրոջը՝ համապատասխանաբար քսան և տասը միլիոն դրամը գերազանցող գումարը թույլատրում է վճարել մինչև հինգ տարվա ժամկետում, համայնքի ավագանու որոշմամբ ընդունված՝ տարաժամկետ վճարման ժամանակացույցին համապատասխան: Ընդ որում, հողամասի սեփականատերը նաև պարտավոր է համայնքին վճարել տոկոսներ՝ տարաժամկետված գումարի տարեկան մեկ տոկոսի չափով: Տոկոսները ենթակա են վճարման՝ տարեկան կարգով, մինչև հաջորդող տարվա մարտի 31-ը: Սույն մասով նախատեսված դիմումը համայնքի ղեկավարին կարող է ներկայացվել հողամասի նպատակային նշանակությունը սահմանված կարգով փոփոխելու մասին որոշման կայացումից հետո՝ մեկամսյա ժամկետում: Սույն մասով նախատեսված հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը տարաժամկետ կարգով վճարելու պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հողամասի սեփականատերը համապատասխան համայնքի հետ պետք է կնքի նպատակային նշանակությունը փոփոխված հողամասի հիփոթեքի պայմանագիր կամ ներկայացնի տարաժամկետ վճարման ժամկետից ոչ պակաս ժամկետով և տարաժամկետ վճարման ենթակա գումարից ոչ պակաս գումարի երաշխիք՝ տրված Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորված բանկի կողմից: Ընդ որում, սույն մասում նշված երաշխիքը պետք է համայնքի ավագանուն ներկայացված լինի նախքան տարաժամկետ վճարման մասին համայնքի ավագանու որոշման կայացումը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է սույն մասով նախատեսված հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը տարաժամկետ կարգով վճարելու պարտավորության կատարումն ապահովելու նպատակով կնքվող հողամասի հիփոթեքի պայմանագրի օրինակելի ձևը:»

Հոդված 2. Օրենսգրքի 7-րդ հոդվածի 13-րդ մասում «վճարման անդորրագիրը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 8.1-ին մասով սահմանված դեպքերի, որի պարագայում ներկայացվում է այդ

մասով սահմանված համայնքի ավագանու որոշումը»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո ծագած կադաստրային արժեքների տարբերությունը վճարելու պարտավորությունների վրա:

Հոդված 4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում: